

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆԵՐԻՑ

(Եկամտերի բնութագրումը և բնութայինը)

Զ. Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ժողովրդական բանահյուսության հետ ունեցած Թումանյանի ստեղծագործական առնչություններին անդրադառնալիս միշտ էլ բերվում են նրա «Հայոց պրամբյանիզմը և ես» հանրահայտ հոդվածի այս առդերը. «Ես իմ լեզունդներն էլ եմ ժողովրդից առել, բոլոր հեքիաթներն ու գրույցներն էլ եմ ժողովրդից ու ժողովրդականիցն առել, ու միշտ աշխատել եմ ու աշխատում եմ, ինչքան կարելի է մոտիկ ու հարազատ մնալ, «Սասունցի Դավիթը» կազմելիս էլ եմ ալդսլես արել, նույնիսկ «Անուշն» էլ, «Թեմիքյանն» էլ, մյուսներն էլ, որտեղ քեֆս տվել է, օգտվել եմ ժողովրդական նյութերից և շատ անգամ հենց ինչպես իրենք են ասում՝ «բառացի»¹։

Այս տողերը հիմնականում բացահայտում են Թումանյանի՝ ժողովրդական բանահյուսությանը մոտենալու սկզբունքները։ Ուշագրություն դարձնենք «ժողովրդից» և «ժողովրդականից» արտահայտությունների վրա, որոնց լավագույն մեկնությունը տալիս է Դ. Դեմիրճյանն իր հուշերում. «Նրա դործունեության մեջ,— ասում է նա,— կար մի ներքին կարգավորիչ, որ տնային հավատարիմ դործիքի պես պետք էր նրան։ Դա ժողովրդական իմաստությունն էր, ժողովուրդը։ Այն ժողովուրդը, որ դրական խնդրում օգնում էր նրան թեմալի, ձևերի, լեզվի, ոճի մշակման մեջ՝ ուղղություն էր տալիս նրա քաղաքական հայացքներին, վարքագծին, որոշ պրոֆիլ էր տալիս նրա ազգային-ազգայնական հայացքներին, մեղմացնում էր այդ ազգայնությունը քաղաքական խնդրում և ուժեղացնում էր նրա դեմոկրատիզմն ու հումանիզմը»²։

Այս ամենով հանդերձ, չպիտի կարծել, որ Թումանյանը ժողովրդական նյութերին մոտեցել է, որքան կարելի է, լուսանկարչական ճշմարտությամբ, որ նա միայն բարբառը վիժել է դրականի։ Եթե նա հավատարարում էր, թե՛ «որտեղ քեֆս տվել է օգտվել եմ՝ հենց թեկույ բառացի», այդ մեղ իրավունք չի տալիս համաձայնել նրա «քեֆի» հետ, մանավանդ, երբ ծանոթանում ենք Թումանյանի ֆուկլորային նյութերի մշակման սկզբունքներին։ Կա, անշուշտ, ժողովրդականի տեքստից բառացի օգտվելու հանդամանք, բայց սա չէ նրա ստեղծագործական մտածողության բնորոշ կողմը։ Ինչպես բանաստեղծն է նկատում, «Պետք է իմանաս, թե ինչը թողնես, ինչը դեն գցես. ուստի մարդ պետք է աչք ու ճաշակ ունենա՝ լավը վատից, իսկականը կեղծից ջոկելու համար»³։

Ընդհանրապես, ֆուկլորային նյութերին մոտենալու երկու հիմնական սկզբունք կա. տեքստի բառացի մատուցման և նյութի ստեղծագործական վե-

1 Զ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 267։

2 Դեմիրճյանի անտիպ հուշերից։

3 Զ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 96։

րարտագրման սկզբունքները: Երկուսն էլ ունեն իրենց ինչպես առավելությունները, այնպես էլ՝ թևրությունները: Բառացիի ղեկբում, որպես օրենք, կաղում է ընդհանուր կատարումը, դործը դուրս չի դալիս լայն ասպարեզ, հույժ տեղացնացվածության արատճառով կղղիանում է, դառնում է միայն տեղացիների և, լավագույն ղեկբում էլ, մասնաղետ ֆուկլորիստների ուշադրության առարկա:

Ստեղծագործականի ղեկբում, հաճախ, ֆուկլորային նյութը կորցնում է իր հմայքը, ժողովրդական մտածողության հատուկ շատ նրբերանգներ: Բարբառային առանձին իմաստավորված բառակապակցությունները ղրականի փոխելու ղեկբում մերկանում են, կորցնում իրենց հյութեղությունը, և, որ ամենից վտանգավոր է, դուրս է բարձրացնում զաղափարական սուբյեկտիվիզմը:

Թումանյանը ընտրել է միջին ճանապարհ՝ ժողովրդական բանահյուսության աղբյուրներին հավատարիմ մնալը նրա համար չի նշանակել բացարձակ, անվերապահ՝ հավատարմություն, ինչպես նաև ժողովրդական նյութի սյուժետային գծից շեղվելը՝ օտարացում: «Սյուժեն էլ ունի նշանակություն,— ասել է Թումանյանը,— բայց հիմնականը ղեկարվեւստական մշակման նոր ձևն է: Հարկավոր է այնպես ղրել, որ ժողովրդի խոսքը, հոգին ու միտքը ցուցաղրվեն»⁴:

Այս առումով պերճախոս օրինակ է բանաստեղծի «Կաքավի երդը» ժողովրդական ստեղծագործության մշակումը, որի համար սկզբնաղբյուր է ծառայել 1850 թ. «Բազմավեպի» համարներից մեկում հրատարակած «Երգ կաքաւի Վանեցոյ»:

Բերենք սկզբնաղբյուրի և մշակման միայն առաջին քառյակները.

Երգ կաքաւի վանեցոյ	Կաքավի գովքը
Արև տէպաւ սարին վերէն խօրոտիկ, խօրոտիկ,	Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքաւ ելաւ իրեն բնէն,	Կաքաւ թրոաւ կանաչ սարեն,
Բարև արեց ծաղիկներէն	Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Թոաւ եկաւ սարի ծերէն խօրոտիկ, խօրոտիկ.	Բարև բերաւ ծաղիկներեն.
Այ խօրոտիկ, խօրոտիկ	Սիրունիկ, սիրունիկ
Այ սիրունիկ կաքաւիկ	Նախշուն կաքավիկ:

Պահպանելով ժողովրդական երգի իմաստը, հմայքն ու հյութեղությունը, Թումանյանի վերամշակումը միաժամանակ ձեռք է բերել նոր որակ. կանոնավորվել է երգի արխիտեկտոնիկան, չափավորվել անհրաժեշտ կրկնությունները. լրդը հնարավորին չափ ազատվել է բարբառայնությունից, լեզուն ղարձել է ավելի բարեհնչուն ու երաժշտական:

Ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը մշակելիս բանաստեղծը ղեկավարվել է թեպետ և տարբեր, բայց կոնկրետ նյութից բխող ելակետերով:

Նա սկզբունքորեն կանգնել է ժողովրդական նյութի զաղափարական բովանդակությանը հարադատ մնալու ճիշտ ճանապարհին. և սա է եղել ֆուկլորային տեքստերի մշակման ներքին կարգավորիչը, ժողովրդական բանահյուս-

⁴ Ստեփան Տեր-Ավետիսյանի հուշերի անտիպ տետրից:

սության զաղափարական միտումը, նրա առողջ կոնցեպցիան, նույատակասյացությունն ու իմաստությունը, որ երկար ժամանակ անցել է սերունդների քննության բովով, հղկվել, փորձվել ու բյուրեղացել:

Միևնույն ժողովրդական ավանդությունը, հեքիաթը, երգն իրենց այլևայլ տարբերակներում պահպանելով զաղափարական բովանդակության նույնությունը, այնուամենայնիվ արտաքին զործոններով տարբերվել են: Վերջիններս հիմնականում շորսն են.

- 1. Աշխարհագրական տեղանունների տարբերություն:
- 2. Լեզվական կառուցվածքների տարբերություն:
- 3. Առանձին միջադեպերի տարբերություն:
- 4. Տեղալնացված ավանդության պահանջներից եկող տարբերություն:

Ֆոլկլորային նյութերի մշակման ընթացքում Թումանյանը հատուկ ուշադրություն է դարձրել աշխարհագրական տեղանունների տարբերության վրա և նկատել, որ «Աշխարհագրական անունները վեպի մեջ գործողության վայրերը չեն, այլ մեծ մասամբ պատմողն է մեջ բերում՝ ոճը կենդանացնելու համար»:

Թումանյանը գտնում է, որ հնարավորին չափ պետք է հետևել պատմական նախահիմքերին, կամ հակառակ դեպքում ընդգրկել տարբերակներում ավելի շատ ընդունված, ավելի շատ կրկնվող աշխարհագրական տեղանունները:

Լեզվաոճական տարբերությունների վերացումը պայմանավորվում է մշակվող տեքստը գրականին մոտեցնելու շափերով: Թումանյանն աշխատել է բարբառային տեքստից դեպի գրականն այնպիսի մի անցում կատարել, որի ընթացքում չկորչի աղբյուրի լեզվական հմայքը: Հպիզոդիկ պատկերների և տեղայնացված ավանդություններից եկող տարբերությունները Թումանյանը վերանայել է՝ ելնելով այն բանից, թե դրանք որքանով են օգնում մշակվող գործի զաղափարական-գեղագիտական արժանիքների բարձրացմանը:

Այն հսկայական աշխատանքը, որ կատարել է Թումանյանը աղբյուրների ընտրության, նյութերի կուտակման ու առանձին տարբերակների համադրման ընթացքում, ապշեցուցիչ է: Նրա ստեղծագործական փորձն այս առումով ուսանելի շատ կողմեր ունի, նրա տաղանդից եկող երևակայության թռիչքը միշտ էլ ղուգակցվել է աշխատասիրությամբ, բանասիրական տքնաչան ու մանրազնին պրպտումներով:

Նախքան ֆոլկլորային նյութի մշակումը բանաստեղծի առաջնահերթ խնդիրն է եղել հավաքել անհրաժեշտ բոլոր աղբյուրները՝ ժողովրդական բանահյուսության նյութերը իրենց բազմաթիվ տարբերակներով, նրանց գեղարվեստական մշակումները, այդ նյութերին վերաբերող գիտական աշխատությունները:

Նյութերի կուտակմանը հաջորդել է անհրաժեշտ աղբյուրների ղուգահամեմատումը: Գրականության և արվեստի թանգարանում պահպանվել են Թումանյանի «Կոնատ աղչիկը» հեքիաթի մշակման լաբորատոր նյութերը⁵, որոնցում սղագրվել է Թումանյանի ստեղծագործական մտածողության այս էտապի պարզ պատկերը:

5 Զարեհի անվան գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, 89.
6 Նույն տեղում, 125:

Բերենք թեկուղ աղբյուրների պուզահամեմատման այս օրինակը.

Косоруника
Афанасев № 152 «а»

Афанасев «в»

Լինում է չի լինում մի հարուստ վաճառական: Ունենում է երկու որդի, մի աղջիկ, մի տղա: Հերն ու մերր մահանալով ախպերը քվորն ասում է.— Գնանք քույրիկ, էս քաղաքից մի ուրիշ երկիր, ես առետուր կանեմ, քեզ համար էլ տուն կվերցնեմ՝ մեջը կնստես: Գնում են ուրիշ երկիր, ախպերը ամուսնանում է մի վհուկի, կախարդ կին է առնում: Ամեն օր խանութ գնալիս քրոջն ասում է. «Քույրիկ ջան մտիկ տուր տանը»: Կինը նախանձում է ու բարկանում, թե ինչու մարդը քրոջն է ասում:

Սպասում է հենց ետ դալու ժամանակ վեր է կենում տան կահ կարասին չարդում ու դնում մարդու առաջը:

— Այ,— ասում է,— ինչ տեսակի քույր ունես, մեր ամբողջ կահ կարասին ջարդեց...

Հայրը մահանում է, որդին մի քանի օրից որսի է դնում: Սա մի հատ կին է ունենում, վերցնում է ձին ու բաց թողնում: Մարդը տուն է գալիս, գանգատվում է.— Այ դու սիրում ես քո քրոջը, փայփայում ես, իսկ նա քո սիրած ձին բաց է թողել:

Афанасев «с»

Ախպերը տեղ գնալիս քրոջը հարցնում է, թե ինչ տեսակ կտոր է ուզում, որ առնի իր համար: Կինը սրանից սաստիկ վշտանում է:

Մի այլ տարբերակ՝

Ախպերը տուն է գալիս 10 խնձոր բերում: Չ տալիս է քրոջը, 5 իրեն ու կնոջն է թողնում: Կինը ղրանից էլ է վշտանում:

Մի ուրիշ տարբերակ

Սաղիկ է բերում, կնոջը թողնում, քրոջն է տալիս...

«Անրախա Մարիամը» — հայերենում հորթ մայրը թագուհի է, նախանձում է իր խորթ աղջկանից...

Այսպես, բերելով մշակվող հեքիաթի բոլոր տարբերակների սյուժետային հանդույցները, Թումանյանը կատարել է անհրաժեշտ բնութագրում, որի ընթացքում հաշվի է առել, թե ո՞ր տարբերակի սյուժետային հանդույցն է դեղագիտական առումով քննություն բռնում, նրա ո՞ր հատվածը կարող է դառնալ հիմնական տեքստի օրգանական մասը:

Կոնկրետ «Կոնատ աղջիկը» հեքիաթի սեփական մշակման մեջ Թումանյանը մտցրել և յուրօրինակ երանգավորման է ենթարկել Աֆանասևից բերված տարբերակների ա, б, с սյուժետային հանդույցները: Այդ տարբերակների հետ զուգահեռաբար օգտագործել է նաև շուրջ 11 հայ և օտար այլ աղբյուրներ:

Չկա մի հեքիաթ, որի մշակման ժամանակ հեղինակը բավարարված լինի ինչ կամ երկու աղբյուրով: Նա աշխատել է օգտագործել հայտնի բոլոր նյութերը: Ինչպես երևում է «Ո՛չ գրական ոչնչությունները քննադատ» հոդվածից («Մշակ», 1909 թ., № 169, 170), «Զախախ թագավորը» գրելիս նա օգտագործել է շուրջ 14 տարբերակ: Մանուկների համար գրված «Մուկիկի մահը» փոք-

րիկ ստեղծագործության համար Թումանյանը հսկայական աշխատանք է կատարել: Ինքնագրի լուսանցքում կարմիր մատիտով նշում է օգտագործված աղբյուրների ցանկը: 1. «Հայկունի հինգ վեպ» («Գուլգուլ խաթուն», «Լուսնու ուռիլը», «Նազլու խանում», «Պուճուր մուկը». (Կողբ), «Բլոճի հեքիաթը» — Շիրակ), 2. «Вопка и блошка» (Гримм), «Кавказские сказки» (Гатуцк)⁷. «Մուկն ու պոպոբը», իսկ «Հաղարան Բլրուլին» վերաբերող արխիվային նյութերն անսպառ են: Թումանյանն անձամբ կազմել է օգտագործվելիք աղբյուրների ցանկը⁸, որի մեջ հիշվում են 58 տարբերակ:

Ծանոթանալով «Հաղարան Բլրուլին» վերաբերող արխիվային նյութերին, իրավամբ համոզվում ես, որ այն ստեղծագործական հզոր կուտակումների մոսումենտալ զործ պետք է լիներ, և ավստոսում, որ հեղինակին չի հաջողվել մինչև վերջ իրադործել այդ մեծ մտահղացումը:

Թումանյանն անհրաժեշտ նյութեր է կուտակել ո՛չ միայն ժողովրդական բանահյուսության այս կամ այն զործի զեղարվեստական մշակման, այլև սեփական մտահղացումների համար: Վերջին դեպքում թվում է, թե բանաստեղծը կրավարարվեր որոշակի ազդակով և իր ստեղծագործական երևակայությամբ: Երբեք: Թումանյանը պետք է հենվի իրականության մեջ գոյություն ունեցող կամ ունեցած եղելությունների համադիր տվյալների վրա: Արխիվում պահպանվող «Դեպի անհունը» պոեմին վերաբերող նախնական գրառումներից երևում է, որ բանաստեղծը հատուկ ուշադրություն է դարձրել կենսական տվյալների հավաքմանը: Առանձին թղթի վրա նա գրի է առել լեթարգիական բնի կամ կլինիկական մահվան պահեր ապրած մարդկանց կենդանանալու և սարսափահար ամբոխի նրանց սրախողխող անելու դեպքերի նկարագրություններ: Այսպես.

«1900 թ. զարնանը Զուլումենց Մաթոսի տղի հետ այդպիսի մի դեպք պատահեց: 26 տարի առաջ Ղաղախա մի գյուղում մեկը կենդանանում է: Գլուխը կտրում ուսի տակ են դնում: 1890 թ. Օձնեցի Մայխասանց Մայխասի աղջիկ Մարիամին թաղելիս արթնանում է, սպանում են: Թումանին կրակեցին 83 թ., Շուլավերցի Քոսականց Բարին 1830 թ., 1895 թ. Ահնձորցի Թանանց Թաթուն» և այլն⁹:

Հարց է ծագում, ի՞նչ նպատակով է հավաքել այս փաստերը, արդյոք այս դրառումները ինչ-որ չափով օգտագործվե՞լ են պոեմում, թե ոչ: Հավանական է, որ դրանց, որպես երևույթ, իրենց մանրամասնություններով Թումանյանը օգտագործած լինի պոեմի նախնական տարբերակում, որ ձեզ չի հասել: Հայտնի է, որ Շանթը, կարդալով պոեմի այս տարբերակը, ցնցվել է նրա մեջ տեղ դտած ծայրահեղ ու ահավոր պահերի առանձին նկարագրություններից: Ըստ երևույթին գտնելով, որ բանաստեղծը չի պահպանել դեպքերի, երևույթների նկարագրության լատկոռնյան չափանիշը, խորհուրդ է տվել ոչնչացնել պոեմը կամ հիմնավորապես վերափոխել¹⁰:

⁷ Զարեցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, 65:

⁸ Զարեցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, 10, ԺԸ:

⁹ Նույն տեղում, ֆոնդ 69:

¹⁰ Թումանյանը «Դեպի անհունը» պոեմի տպագիր տարբերակում ունի հետևյալ տողերը.

Բայց ես միշտ թաթուն մի հույս ունեի,

Ցառել եմ մեկին, ուզել եմ բաղել,

Թե կարող է նա լինել... կենդանի...

Շիրմի փոսի մեջ զարթել է հանկարծ,

Մի տեղ մի անգամ էղպես է եղել.

Կարող էր և մեզ լինել պատահած...

(Երկերի ժողովածու, հատ. II, էջ 79, երևան, 1948 թ.):

Փաստը մնում է փաստ, որ բանաստեղծը բոլոր դեպքերում էլ՝ լինի դա ֆուլկորային նյութի մշակում, թե սեփական մտահղացման կատարում, նախապես լուրջ աշխատանք է տարել նյութերի հավաքման և նրանց տվյալների անհրաժեշտ քննության համար:

Անհրաժեշտ նյութերի կուտակումից հետո բանաստեղծը անցել է նրանց քննությանը: Էջը կիսելով երկու հավասար մասերի, մի մասի վրա գրի է առել քննության դրած կենսական նյութը, դիմացը, հաջորդաբար՝ իր սեփական խորհրդածությունները, լրացումները: Հաճախ ընդգծելով կարևորը, թողել է հետագա քննության, այնուհետև, որոշ ժամանակ անց, նորից անդրադարձել: Ու այսպես, ամեն հարցի շուրջը Թումանյանի խորհրդածությունները և մտորումները ճյուղավորվել են, ծավալվել: Այս առումով ուշագրավ է բանաստեղծի արխիվում պահպանված «Ծաղիկների երգը» լեզենդի և «Շունը» պատմվածքի նյութերի քննությունը:

Ինչպես երևում է, բուսական ու կենդանական աշխարհին նվիրված ստեղծագործությունների նյութերից և բանաստեղծի նամակներից, Թումանյանը հատուկ նպատակով ուսումնասիրել է բուսական ու կենդանական աշխարհին վերաբերող այլևայլ դիտական աշխատություններ: 10-ական թվականներին դրած իր «Ծղրիգը», «Գելը», «Շունը», «Նղջերուն», «Նղջերվի մահը», «Արջաորսը», «Ծաղիկների երգը» և այլ ստեղծագործություններում նկարագրված բույսերին, կենդանիներին Թումանյանն ինչ-որ չափով օժտել է ինտելեկտուալ կարողություններով: Նրանք ուրախանում են, վշտանում, երազում, զայրանում ու վերհուշ ապրում:

«Շունը» պատմվածքի նյութերն ամփոփված են շուրջ 66 մեծագիր էջերի վրա¹¹: Թվում է, որ նյութերի այս հսկայական կուտակումը և քննությունը շատ ավելի մեծ գործի հիմք պետք է լիներ, ավելի շուտ՝ մի դիտա-գեղարվեստական բնույթի գործի, քան իրականում է: Հեղինակին հետաքրքրել են հատկապես կենդանու հոգեբանությունը պայմանավորող գործոնները, նրա արտաքին աշխարհի հետ գիտակցական առնչման ներքին դրդապատճառներն ու հանգամանքները:

Հեղինակն իրավացիորեն դառնում է, որ կենդանին կարող է իր մեջ մշակել արտաքին սլաքմաններից եկող յուրահատուկ հոգեբանություն: Քննության ընթացքում նա պայմանական ռեֆլեքսների շուրջն ստեղծված տեսության կողքին փորձում է դնել կենդանու բնատուր ինտելեկտուալ կարողությունների առկայությունը: Մեջ է բերում նշանավոր շների մասին պատմություններ՝ հուլի պատմությունն իր շան մասին, ոմն էլիդար Բլազի պատմությունը մուրացկանի շան մասին, կոմս Անդրեյի Պլուտոն շան և լոնդոնցի վիրաբույժ Բելկանինի շան պատմությունը: Ընդհանրապես, այս պատմվածքի համար հեղինակը հսկայական աշխատանք է կատարել: Հավաքել է շանը վերաբերող դիտական, պատմական, գեղարվեստական բնույթի աղբյուրներ, ծանոթացել Դարվինի աշխատություններին, դրի է առել շանը վերաբերող շուրջ 80 ասացվածք («Շան պես իմացավ», «Շունը կապեն չի կենա», «Շնից շուն կծնվի» և այլն):

Թումանյանի արխիվում պահպանվել է պատմվածքի յուրօրինակ պլանը, որը ընդգծել է ներքոհիշյալ խնդիրները՝ Շունն ու մարդը (կապը) պատմական

¹¹ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի Ձեռագ. № 131:

տեսությունն: Շան ծագումն ու պատմությունը: Շան տեսակները: Շան կյանքն ու մահը: Շան ընգունակությունները: Նշանավոր շներ:

Նույնը պիտի ասել «Ծաղիկների երգը» լեզենդի համար կուտակված նյութերը¹²:

Կրկին թուղթը կիսելով երկու մասի, բանաստեղծը նյութի չափածո շարադրանքի դիմաց դուրսհեռաբար տալիս է իր խորհրդածությունները: Բերում է տարբեր ծաղիկների անուններ, առանձին միջադեպեր այդ ծաղիկների ծագման պատմությունից, նրանց շուրջն ստեղծված ավանդություններից, հաճախ առանց աղբյուրը նշելու՝ բերում է առանձին աշխատությունների էջեր:

Այնուհետև անցնում է ծաղիկների դերի և նշանակության քննությանը: 1. Ուրպես ճեմի՜ւմ — Թումանյանը նշում է, որ նրանք լայնորեն օգտագործվում են բժշկության մեջ, խոսում է դրանց բուժիչ հատկությունների մասին. «Լուրջ կերպով օգնում են հիվանդին, եթե նրանց եփում ու վաննաներ են ընդունում»:

2. Ներկաւ առ — «Մեկի ծաղիկն է ներկում, մյուսի արմատը» (դեղնածաղիկն ու տորենը):

3. Գույների սիմվոլիկ նշանակությունը: «Հայերի մեջ կանաչը՝ սիրու կարմիրը՝ ուրախության, դեղինը՝ անհաստատության, սևը՝ տխրության, սպիտակը՝ թարմության նշան է: Հայերը կապույտ են սիրում: Կանաչը՝ սպիտակն ու կարմիրը, քիչ էլ կանաչը»: Ծաղիկն էլ «իբ հոգեբանությունն ունի», իր «վարվելակերպը», «իբ կենցաղը», «Բույսն էլ մայր ունի և հայր»:

Բանաստեղծը գտնում է, որ ծաղիկների բոլոր գույներն ու նրանց նրբերանգները իմաստավորված են. ինչպես ձևերն ու ձայներն են արդյունք որոշակի երևույթների բախման, այնպես էլ՝ գույները: Ապա առանց մեկնության անց է կացնում այսպիսի մի դուգահեռ — «ձևեր-գույներ-ձայներ»: Եյութի հետադա քննության ընթացքում Թումանյանը կանգ է առնում առանձին ծաղիկների վրա: Ինչպես, օրինակ՝ Վառդը. որ ծաղիկների մեջ ամենասիրվածն է, նրա շուրջը գեղեցիկ պատմություններ ու լեզենդներ են հյուսվել, նա դարձել է արևելյան ժողովուրդների սիրային պոեզիայի խորհրդանիշ: Վարդի շուրջ ծագած իր խորհրդածությունների դրամանր լուգահեռ, հեղինակն արել է հղումներ, նշելով վարդին վերաբերող առանձին ստեղծագործությունների, գիտական ուսումնասիրությունների, հեթաթների վերնագրեր:

1. «Վարդը» — Գյոթե, 2. «Ծաղիկների թագուհին», 3. «Եղեմական ծաղկի եթաթը», 4. Վարդը, 5. «Աշխարհի ամենագեղեցիկ վարդը», 6. «Վարդի թագավորությունը», 7. «Երկու վարդ», 8. «Վարդն ու մանիշակը», 9. «Ծաղիկների թագուհին», 10. «Սոխական ու վարդը», 11. Сказка Андерсена «Какая ты роза самая счастливая» և այլն:

Նա անում է նաև նկատողություններ, հիշեցնում մարդու ու բուսական աշխարհի կապը, նշում, որ մեր բանահյուսության մեջ առաջ է քաշված այն միտքը, թե մարդը սերվել է բույսից—«Վահագնի ծնունդը»: Վերջում բերում է շուրջ 150 անուն ծաղիկների ցանկ:

Այսպես է ահա աշխատել մեծ բանաստեղծը և միայն այսպես են կերտվում արվեստի իսկական զործերը:

¹² Զարենցի անվան դրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, 68: